

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մատթէոս ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Մինոգի Սրբոյ Էջմիածնի։

Յայտնի է Ամենիդ, եթէ ամենայն հոգևոր հաստատութիւնք և պաշտօնեայք մեր վարեն զգործս և զգրագրութիւնս ի լեզու գրաբար, որ յաճախ անըմբռնելի և անհասանելի լինի բազմաց ի պաշտօնէից, նա զի բազումք ի քահանայից անգիտակ են լեզուիդ, որպէս և երեսփոխանք եկեղեցեաց և վարիչք կամ հոգաբարձուք ուսումնարանաց մերոց, ընդ որս յաճախակի լինին գրագրութիւնք ի կողմանէ հոգևոր պաշտօնէից կամ հաստատութեանց մերոց։ Յայս սակս ի բազում դէպս տնօրէնութիւնք հոգևոր իշխանութեան ի գրաբար լեզու մնան անիմանալի մտաց ստորին պաշտօնէից կամ սխալ ըմբռնելի,

որով և հետևի թերի կատարումն կամ նոյն իսկ անկատար մնալ կարգադրութեանց և առհասարակ յապաղումն գործոց։

Արդ՝ առ ի զառաջս առնուլ սոյնօրինակ անպատեհութեանց և ի բառնալ ի միջոյ զդժուարութիւնս, որոց հանդիպեալ ժողովրդականաց մերոց՝ զինդիրս իւրեանց յանուն մեր, հոգևոր պաշտօնէից և հաստատութեանց ի գիր արձանացուցանեն յաշխարհիկ լեզու, Մեք բարւոք վարկաք՝ ի շահ և ի դիւրութիւն անարգել և արագ գործավարութեան և անսայթաք կատարման ազգի ազգի տնօրէնութեանց հոգևոր և դպրոցական վարչութեանց մերոց թոյլ տալ վարել զգրագրութիւնս յաշխարհիկ լեզու։ Վասն այսորիկ առաջադրեմք Սինոդիդ առնել շրջաբերական տնօրէնութիւն ի ձեռն ամենայն թեմական առաջնորդաց, պատուիրելով ամենայն դպրոցական և հոգևոր հաստատութեանց և պաշտօնէից մերոց առնել զգրագրութիւնս յ1-էն յառաջիկայ յունուար ամսոյ յաշխարհիկ լեզու, յոր ունի վարել զգործս և զգրագրութիւնս նաև Սինոդդ. իսկ զերդումն, որպէս զծէս եկեղեցւոյ, հարկ է կատարել ի լեզու գրաբար ըստ առաջնոյն՝ յորժամ հարկ լինի ածել յերդումն զծառայողս կամ զվկայս յայլ և այլ դատարանս. ամին նման և Հայրապետական Կոնդակք ըստ նախնաւանդ սովորութեան շարունակեսցին ի գրաբար լեզու։

Իսկականի վրայ ստորագրած է՝
«ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

Ի 25-ն դեկտեմբ. 1909 ամի.
Թ. 810.

Հայրապետական տնօրէնութիւններ.

Կոնդակ Թուրքիոյ Ամենապատիւ Պատրիարքի անունով ընդհանուր տեղեկութիւն տալու Տաճկահայաստանի հայ թեմերի՝ Կիլիկիայի, Վերին Հայաստանի, Փոքր Հայքի և Կ. Պոլսի հայ ազգաբնակութեան թուի մասին։ Թ. 659. դեկտ. 16.

— Ս. Էջմիածնի Գէորգեան Հ. Ճեմարանի Վարչութեան անունով, որով պատուիրուեց եօթներորդ դասարանի բանալը թողնել մինչև թեմական դպրանոցների մէօրինակ ծրագրի իրագործելը։ Թ. 665. դեկտ. 16.

— Վրաստանի Թեմի Ս. Առաջնորդի անունով, որով պատուիրուեց, Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանի Գանձակի փոխանորդութեան պաշտօնից հրաժարուելու պատճառով, նոր ընտրութիւն նշանակել։ Թ. 670. դեկտ. 16

— Նոյն Առաջնորդի անունով, որով մերժուեց իշխան գնդապետ Կոստանդին Մելիքեանցի խնդիրը՝ տոհմի ննջեցեալների մարմինները Տփխիսի Վանաց ուսադ եկեղեցու գաւթում թաղելու մասին։ Թ. 671. դեկտ. 16.

— Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարչի անունով, որով Նունէ Զուբարեանի կատարուած պսակը վաւերական համարուեց։ Թ. 680. դեկտ. 18.

— Վրաստանի Թեմի Առաջնորդի անունով, որով մերժուեց Զարդեղեանց և Աբուլեանց քահանաների խնդիրը՝ վերստին Ներսիսեան դպրանոցում ուսուցչութեան պաշտօն տալու համար։ Թ. 681։ դեկտ. 18.

— Փոթի քաղաքի ծխ. Վարդան քահանայ Նալբանդեանի անունով, որով իրաւունք տրուեց նրան Փոթիի եկեղեցու շինութեան օգտին Կովկասի քաղաքներում տարածել աղիւսների տեսակները համաձայն արտօնութեան տէր փոխարքայի Կովկասու։ Թ. 802. Դեկտ. 25։

—Երևանի Փոխ–Թեմակալի անունով Նոր–Բայազիտի գործակալի ընտրութիւն կատարելու մասին։ Թ. 841։ դեկտ. 17.

—Վրաստանի Առաջնորդի անունով, որով պատուիրուեց շարունակել եկեղեցական–ծխական դպրոցներում գործածել այն ծրագիրն, որ մինչև օրս գործադրուում է, մինչև նորի կազմելը։ թ. 849 դեկտ. 31.

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԸ

—Դեկտեմբերի 4-ին Սինոդը քննութեան առաւ Նուխի գաւառի Սուլթան–Նուխի գիւղի բնակիչ Սիւքիաս Տէր Զաքարեանի խնդիրը։ Ինչպէս գործից երևում է, Սուլթան–Նուխի գիւղը ունի 200 տուն բնակիչ, երկու եկեղեցի և միայն մի քահանայ, որը ծերութեան, կուրութեան և հիւանդութեան պատճառով չի կարողանում հովուել ծխականներին։ Ընծայացու Տէր–Զաքարեանը սովորել է Գէորգեան ճեմարանում և անցել է չորրորդ դասարանի դասընթացքը։ Հրամայեցին. ի նկատի առնելով ընծայացու Տէր-Զաքարեանի պատրաստականութեան չափը, նրա չորսամեայ ուսուցչութիւնը և Թրքախօս ժողովրդի հոգևոր կարիքները՝ ամենախոնարհ յայտարարութեամբ խնդրել Նորին Սրբութեան բարեհաճ հաւանութիւնը Սիւքիաս Տէր-Զաքարեանին քահանայ ձեռնադրելու համար։ Թ. 763.

—Դեկտեմբերի 7-ին Սինոդը քննութեան առաւ ընծայացու Մխիթար Տէր-Բարսեղեանի խնդիրը։ Գործից երևում է, որ Վաղահաս և Կարմիր Բար գիւղերը ունեն 106 տուն բնակիչ, իսկ Տէր-Բարսեղեանը սովորել է միայն Արցախի թեմական ընծայարանում։ Հրամայեցին. ի նկատի առնելով, որ ընծայացու Մխիթար Տէր-Բարսեղեանը չունի պատշաճ ուսման վկայական, ծխակ. կանոն. 59 յօդ. հիման վրայ նորա խնդիրը թողնել առանց հետևանքի։ Թ. 768.

—Դեկտեմբերի 11-ին Սինոդը լսեց Նոր–Բայազէդ գաւառի Զըռչըռ գիւղացի ընծայացու Աղաբէկ Բաղդասարեանի գործը։ Զըռչըռ գիւղը ունի 110 տուն բնակիչ, ներկայումս քահանայ չը կայ գիւղում, իսկ ընծայացու Աղաբէկ Բաղ-